№ 42—ՏԱՍՆԵՒՄԻԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ 42

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։

Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։ Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենդրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзагангъ“. կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang“.

ԱՐԶԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամը (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԹԻՓԼԻԶԻ ԿԱՅՔԵՐԻ ԿՐԵԿԻՑ ՓՈԽԱՐԵՐՁ ԱՊԱՀՈՎՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

ծանուցանում է ընկերութեան պ. պ. անդամներին, որ մարտի 31-ին չկայացած

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

փոխարէն ընկերութեան կանոնադրութեան § 27 յօդուածի հիման վերայ նշանակուած է նոր ընդհանուր ժողով ապրիլի 14-ին, երեքշաբթի, երեկոյեան 8 ժամին, քաղաքային խորհրդարանի դահլիճում։

(44) (1—1)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սարգիս Սարգսեան։

Մեր ընկերութիւնների նորագոյն կազմակերպութեան առիթով։

ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—«Արարատի» մարտի համարը։ Արևելեան լեզուների դասընթացներ։ Թիֆլիզի գործարանատէրերի մասնակցութիւնը Չիկագոյի համաշխարհային ցուցահանդիսին։ Հանգ. բժ. Եղիա Ալթանդիլեան։ Հրէական հայ մկրտիլը։ Ուսուցչութեան իրաւունքի վկայական։ Կազդուրանից։ Ջբանշաններ։ Թիֆլիզի պատկերահանէսը. Երևանում հիմնուելիք գիւղատնտեսական դպրոցի մասին։

ՏԱՃԿԱՀԱՅՈՑ։

ՖԻԼԻՒՏՈՆ.—Բանաստեղծութիւն առանց չանգերի կամ Ըլլանդակ Մելանթոսը։

ՔՆՂԱՔԱՂՔՆԱՅ։

ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՋԱՆԱՋԱՆ։

ՏԵՂԵԿԱՏՈՒ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ

† 30 մարտի, 1892 թ.։

Դժուար է ասել. . . Այսօր հողին յանձնուեցաւ մեր. . . «փոքր ածուի» ընտիր մշակներից մէկին էլ. . .

Խորհրդի ծերունու՝ իւր անսահման սիրով սիրած ու «ածուի» պէս քաջ ուսումնասիրած ազգին տուած այդ յատկացուցիչն իզուր չեկաւ մեր միտքը. աւաղ, իւր շարքում չունի այլևս Սարգիս Սարգսեանին հայ գործիչների այն սակաւաւոր խումբը, որին կարելի էր անուանել խորհրդանան բանակ. . .

Սակայն արտասուքն ու վհատումն արժանի հարկ չեն քաջ հայրենասիրի յիշատակին. յիշենք նորա կեանքն ու գործերը և նոցանով մխիթարուինք։

Ահա առ այժմ մեր անուանի հանգուցեալի կեանքի մի քանի պարագաները, որ քաղելով նորա ամենամօտ բարեկամի՝ մեծ. ուսուցչապետ Գ. Խալաթեանի դամբանականից, իրրև աւանդ կուզէի տալ ամեն մի հայ ընթերցողի.

Սարգիս Սարգսեանը բնիկ ադուլեցի էր։ Իւր փոքր հասակում նա բերուել է Մոսկուա և յանձնուել այտեղի երրորդ գիմնազիոնը։ Աւարտելով այտեղ իւր ուսման ընթացքը նա մտել է Մոսկուայի համալսարանի Լեզուագիտական - պատմական բաժինը։ Թէ աշակերտ և թէ ուսանող եղած միջոցին նա մեծ սիրով էր պարապում հին լեզուներով. բայց նորա վերջնական նպատակն օտար հին լեզուների (գլխաւորապէս յունարէնի և լատիներէնի) ուսումնասիրութիւնը չէր, այլ նոցա օգնութեամբ իւր մայրենի լեզուի կատարեալ գիտութիւնն ու մանաւանդ աշխարհաբարի մշակումը։ Համալսարանումն ամենայն յաջողութեամբ իւր մանազիտութիւնն աւարտելուց յետոյ նա հրաւիրուեցաւ Ս. Էջմիածնի ճեմարանը։ Բայց հանգուցեալն այնտեղ երկար չը կամեցաւ մնալ, չը նայելով նորան առաջարկուած մեծաքանակ ռոճկին ու թախանձանաց, որովհետև տեղի մանկավարժական պայմանները համաձայն չէին նորա հայեացքներին։ Նա թողեց ճեմարանը՝ Անդրկովկասի ուսումնարանական շրջանում ծառայելու դիտաւորութեամբ։ Բայց այդ էլ չը յաջողեցաւ, այլ դորա փոխանակ վիճակուեցաւ հայրենասէր բայց ձախող պայմանների մէջ գտնուող ուսումնական երիտասարդին վերադառնալ Հիւսիս, ընկնել մի խուլ անկիւն, Բրեանսկ քաղաքը, ստանձնել այնտեղի կլասիքական պրոգիմնազիոնի հին լեզուների ուսուցչի պաշտօնը։ Այդտեղ, միակ Հայը լինելով ոչ միայն քաղաքում, այլ և ամբողջ գաւառում, երիտասարդ գիտնականը ծառայեց ուղիտարի անչափ սիրուած, յարգուած ու գնահատուած ոչ միայն իւր պաշտօնակիցներից, այլ և բոլոր տեղացիներից։ Քաղցր է ասել, որ Հայրենիքից այդքան հեռու պանդխտութեան մէջ, այդ ծովի պէս ընդարձակ ու ցուրտ երկրում նա ամենափայլուն կերպով ապացուցեց, որ ոչինչ հեռաւորութիւն, ոչինչ անյաղթ պայման չէին կարող սառեցնել ու բաժանել նորան իւր սիրած ու գդուած գաղափարից՝ այն «փոքրիկ ածուին» օգուտ բերելու պատրաստականութիւնից, որում ինքն էլ ծնունդ էր առել. «Ազուլեցւոց բարբառը» (Զոլների լեզուն) Բրեանսկում գրուեցաւ։ Մորանից երեք տարի առաջ մի անակնկալ կարգագրութեամբ Բրեանսկի պրոգիմնազիոնը փակուեցաւ և մեր թանգ հայրենակիցը իւր այնտեղի բոլոր պաշտօնակիցների հետ մնաց ծառայութիւնից դուրս։ Դժուար է ասել՝ աւելի տխրութիւնով թէ ուրախութեամբ նա վերադարձաւ Տիֆլիս, ուր և մնաց երկու տարի առանց ծառայութեան։ Այդ միջոցի նորա կեանքը քաջ յայտնի է Տիֆլիսցիներին։ Մի տարի առաջ լոկ պատմում էին Տիֆլիսից այստեղ եկած մի պատուական ընտանիք՝ երիտասարդ այր և կին, թէ չը կար այդտեղ որ և իցէ մտաւոր կենտրոն, չէր լինում որ և իցէ հասարակական օգտի համար կազմուած ժողով՝ առանց Սարգսեանցի։ Ի դէպ. այդ գիծը հանգուցեալի բնաւորութեան նիշներից մէնն է. ուր և լինէր նա, որպիսի հասարակութեան մէջ և գտնուէր, չը նայելով նորա ոչ պահաս բնաւորանիշ համեստութեան՝ անպատճառ նկատելի էր լինում, անգամ աչքի էր ընկնում նորա ներկայութիւնը. նա միշտ գտնում էր տեղական ոյժերին, ինքնաբերաբար միանում էր նոցա հետ իրրև վաղեմի ծանօթ և ամենի վերայ քաղցր տպաւորութիւն ու անուրանալի ազդեցութիւն էր գործում, մի ազդեցութիւն՝ որ մտաւոր ու բարոյական գործերն ու գործողութիւնները հոշատ յաջող վիճակի մէջ են։—Ջատուածների դիտական և «այն աշխարհի» ստուերական հոգիների սուրհանդակ Հերմէսի ճանապարհ մարդիկ *) արդէն ամեն կերպ տքնում, աշխատում են միշտ «դիւր գալ», հաճոյանալ նորան՝ իւր կամածին, քմահաճ ցանկութիւնները կատարելով. . .

Այո, այս այսպէս է. . . Սակայն ինչ եմ ասում։ Պէտք է որ, իրաւ, ինչպէս ասացի՝ նորա հոգու ներքը նայել և հասկանալ, թէ ինչու և ինչպէս նորա սիրտն ու փայծաղը «դարդերից» այրուելով՝ այդպէս զայրացրել, կատաղեցրել են նորան։

Երկի գիշեր նա պառկել էր քնելու՝ մարդկային ցեղին յատուկ ամենազուարճ և քաղցր բերկրութեամբ լցուած։ Այսօր ցաւալի և ամօթալի է դարձել նա իւրայինների համար... Ինչ է պատահել արդեօք... Ի սէր Աստուծոյ՝ շուտ արէք, թաղցրէք նորան մի ծակ տեղում, եթէ ոչ՝ կատարեալապէս կը խայտառակուի և առակ նշանաւոր կը դառնայ. . .

Այսօր առաւօտ, ասում են, քնից նոր զարթնած՝ անկողնից վերկենալիս, ձախ ոտքը պատահմամբ դիպցրել է նա թաղքէ հողաթափի ծալին և այդ չնչին ցաւից խիստ դըժգոհ լինելով՝ սաստիկ չարացել, բարկացել է. . . Խնդրեմ, թողէք նորան հանգիստ և մի նայէք երեսին։ Այսօր՝ ամբողջ օրը, նա այնպէս կը յուզուի, կ'ալէկոծուի, որ մինչև անդամ իւր մտերիմ և «խամս-խոհ» բոլոր անձինք ևս կը նեղուին և կը տանջուին նորանից. . .

Խնդրէմ Մէլանթոս։ Տեսէք թէ ինչ աստիճան տաքացած է նա, որպիսի մի խիստ զայրոյթ պատել է նորան, որ մինչև անգամ ուզում է վախեցնել և ա։—Ո՜հ, որչափ ողորմելի է նա՝ երբ լալիս է որպէս մի երեխայ և կամ որքան ցաւալի և ողբալի է նա՝ երբ կատաղաբար աղաղակելով՝ մռնչում է իրրև մի օրհասական առիւծ. . .

Ահա յանկարծ և առանց մի իրաւական պատճառի պատկերացնում է նա իւր վախկոտ աչքերի առջև մի ինչ որ դժնեայ և օտարոտի ստուեր. զառանցեալ մի ստուեր, որ շփոթելով և մթնեցնելով նորա արդէն խանգարուած երևակայութիւնը, ճիշդ այնպէս մուխն ու սև է երևում նորան, ինչպէս իւր կաղամարի թանաքից կեղտոտած և սևացած մատները։

Ոչինչ մի ասէք, խնդրեմ, նորան այն բաների մասին, որոնք մի քանի վայրկեան առաջ իրան շատ և շատ սիրելի էին։ Սիրելի, այո, սիրելի, հաճելի, և հէնց այդ պատճառով այժմ այլ ևս ատելի, անտանելի են դարձել նորան։ Այն խաղերն ու վարմունքները, այն արարքներն ու «օլիննները», որ նա այնպէս մեծ եռանդով և կրքոտ աւիւնով ցանկացել, գործել և իւրայիններին ևս թելադրել էր՝ հիմա ձանձրալի, տաղտկալի և պղտւելի չիշողութիւններ են դառնում նորա համար, եթէ չեն գարձել արդէն։—Պէտք է ատել, արհամարել այդ ամենը, պէտք է հեռանալ, երես դարձնել այդ բոլորից։ Բայց ինչպէս անէ, ինչ կերպ վարուի խեղճ ողորմելին։—Այժմ արդէն սկսում է ինքն իրան հակառակել, ցաւել իւր վրայ և ցաւեցնել, հարուածել, վիրաւորել ուրիշներին։ Իսկ ոտքա՝ չը կամենալով նեղանալ, բարկանալ նորա վրայ՝ անտարբեր աչքով հանդիսատես են լինում նորա այդպիսի չարաճճի վարմունքին, որով և առիթ են տալիս մեր հիւանդոտ Մէլանթոսին աւելի ևս սրտմտելու և զայրանալու։—Այսպէս նա շատ անգամ սրաճային հարուածներ է գործում մեր նեղ հորիզոնի խառնակ օդի մէջ՝ ճիշդ այնպէս, ինչպէս մի կատաղած վայրենի ցուլ կը հարուածէր, կը կռուէր իւր սրտածայր եղջիւրներով անմեղ քամիների դէմ։ Իսկ երբ պատճառ չը կայ ուրիշներին հարուածելու, «այլոց» դէմ յարձակուելու՝ նա գառնում է դէպի ինքն իրան, դէպի իւրայինները և՝ սկսելով մտրակել, յանդիմանել, անձար ու անընդունակ է համարում իրան նոցա հետ միասին և չափազանց յուսահատվում. . .

Ուրդ՝ հասած լինելով ընկերութեան ոսկէ դարը, խմբագրական ժողովում ընտրուեցան մեր երկրի ոսկի հանքերի նման անյայտ և անծանօթ անձինք։

Սակայն այդ ընտրեալները յայտնի խմբակի առաջնակարգ անդամներն են։

Այնու ամենայնիւ դժուարին պիտի լինի դափնիները ստանալը չհրատարակչական ընկերութեան մէջ, որին պատկանելու համար այս տարի միայն ծանրակիր աշխատանքով վաստակած մեծ գումար են վճարել։

Ընկերութեան վարչութիւնը լաւ զգալով իւր ներկայից խմբագրական մանաժողովի այժն ու կարողութիւնը, յայտարարութիւն է տուել և խնդրում է, որ այդ խմբագրական ժողովին կարող անձինք խոյհուրդներ և ծրագիրներ ներկայացնեն, որպէս զի նա էլ կարողանայ ընդհանուր ժողովին իւր գործունէութեան ապագայ ծրագիրը պարզել։

Ուրգարև ոսկէ գարու վայրկ վիճակ. Հարիւր յիսուն անդամ ժողովուած ընտրում են իրենց միջից մի խմբագրական ժողով, որ բաղկացած է 7 անձից, որոնք սակայն այնքան յայտնի են իւրեանց անկարողութեամբ, որ կարևոր է համարում դեռ ևս նրանց ծրագիրը տալ գործելու համար։

Ջուր չանք և անօգուտ վաստակ։ Եթէ վստահ չէք ձեր խմբագրական ժողովի վրայ, որ կազմել էք ձեր միջի ամենագիտուններից ու կարողներից, ուրեմն ինչ նշանակութիւն ունի քննել նրանց ներկայացրած ծրագիրը, որ անշուշտ պէտք է ձեր ամէնքի կազմածից էլ բարձր լինի, որովհետև դրանք են ձեր առաջնորդները։

Այդ ընկերութիւնն ունեցել է ուղղութիւն և ցոյց էր տուել է այդ ուղղութիւնը. սակայն այժմ երբ անշնորհ թարգմանութիւնների դարն ոսկէ գար է հռչակուած և երբ քընինիչ խմբագրական ժողովը գրեթէ ամբողջովին բաղկացած է հայ գրոհոնոլենա օտար անչերից, հասկանալի է որ ընկերութիւնը չէ կարող հայ գրականութեան զարգացնող ուղղութիւն ունենալ. որովհետև որ քիչ-շատ հայ գրագէտը կ'ուզարկէ իւր երկերը ի քննութիւն այնպիսի ժողովի, որի անդամները հայերէն լեզուն գիտենալը շատ հոչակելի է։

Ի սէր Աստուծոյ, նեղութիւն մի կրէք և մի գնաք այդ յուսահատ դէպքում նորան մխիթարելու, փոքր ինչ սփոփելու։ Այդ ձեր մարդասէր վարմունքը մի շատ վատ և սաստիկ անհաճելի բան կը թուայ նորան։—Ձատ ուղում է մենակ մնալ, ինքն իւր հետ լինել, բայց և չէ էլ կարողանում տանել, դիմանալ մենակութեանը։ Ուստի և ահա նորից մտնում է նա ընկերութեան մի շրջան և կրկին թթւում, տրտմում և զայրանում է այդ ընկերութեան դէմ։ Տէր ողորմեա.—իսկոյն ընկերական շրջանի բոլոր անդամները լռում, «սուս» են կենում և ահա այդ աշխարայ և արհեստական լռութիւնն էլ նեղացնում, վիրաւորում է նորան։ Ապա սկսում են կամաց-կամաց խօսել և խօսակցել իրարու հետ բոլորովին ցածր ձայնով նոյն րոպէին նա երեւակայում է, թէ անշուշտ պատրուեցան պէս մի բան են նիւթում իւր դէմ։ Տէր Աստուած. — խօսում են բարձր ձայնով նա անմիջապէս ընդմիջելով խօսակցութիւնը, հրամայական կարծիք է յայտնում, թէ ինչու

---

*) Տես «Արձագանքի» 29 №-ը ներկայ 1892 թ.։

ՓԵԼԻԵՏՕՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՍՈՒՆՅ ՅԱՆԳԵՐԻ

կամ

ՑՅԼԱՆԴԱԿ ՄԵԼԱՆԹՈՍԸ

(Ֆենելօնից)

(Fénelon.Oeuvres Choisies. Paris,1817)

—Հ՜ը, ինչ կայ, ինչ դժբախտ, ինչ ողորմելի բան է պատահել «խեղճ ու կրակ» Մէլանթոսին. . .

—Տէր ողորմեա. առանձին մի այնպիսի ինչ բան պիտի պատահած լինի նորան, որ՝ ինչպէս գիտէք, իւր անսովոր և անհեդեդ բնաւորութեան իսկական արդասիք չը լինի։

Բայց, այո, նայելով նորա արտաքին երևոյթին, նորա կերպարանքին՝ կարծես թէ ամենևին ոչինչ չէ պատահել։ Եւ իրաւ, ինչ որ պատահել է, ինչ որ հանդիպել է նորան՝ բոլորը, բոլորը իսկապէս նորա հոգու ներսն է առաջացել. . .

Սակայն, փառք Աստուծոյ, նորա մեծ պաշար ունեցող անձանց միայն յատուկ է։

Այդպէս երկու տարի Տիֆլիսում առանց ծառայութեան բայց անպարապ անցկացնելուց յետոյ Սարգսեանցը հրաւիրուեցաւ իբրև նախակրթարանի ուսուցիչ Լազարեան ճեմարանի վերատեսչից, որ վաղուց նորան աչքի առաջ ունէր և բացուած տեղի էր սպասում նշանաւոր Հայ լեզուագէտին ճեմարանում Հաստատելու համար։ Ցեղը բացուեցաւ նախակրթարանի նախկին ուսուցիչ Հանգուցեալ Մ. Մելիք-Ալլահվերդեանի ոչ պակաս ցաւալի մահով։

Անշուշտ շատ մօտիկ ապագայում Հանգուցեալ Սարգսեանցը պիտի բընդներ Լազարեանց նուիրական մեծ Հաստատութեան մէջ իրան արժանի աւելի բարձր դիրքը. պիտի բանէր նա և՛ Հայ գիտնական գրականութեան մէջ իւր ձեռնհասութեան բաւական՝ աւելի ևս նշանաւոր տեղը (Հանգուցեալը ձեռնարկել էր մեր գաւառական բարբառների համեմատական բառգրքի կազմութեան), եթէ մահն այդքան տարաժամ չը խլէր նորան մեզանից։ Չանդուցեալը դեռ երիտասարդ Հասակում էր, ոչ աւելի քան 36—38 տարեկան, թէև արդէն ալեզարդ էր և Հասակն առած էր երևում։ Թաղումը շատ վսեմաւոր էր։ Թէև մահն անակնկալ էր պատահել, ու շատերին չէր յայտնի (մեծաւ Հարիւնքից յետոյ առաջացած ոտի մի վէրքից, որ յետոյ փոխուել էր Անտոնեան կրակի), այնու ամենայնիւ եկեղեցում շատ մեծ բազմութիւն կար։ Կային և՛ օտարազգի պաշտօնակիցներ։ Դագաղը ծածկուած էր 6—7 մետաղեայ և կենդանի ծաղկեայ պսակներով, որոնց մէջ աչքի էին ընկնում՝ Լազարեան ճեմարանից, ուսանողներից, «Հայրենակից վաճառականներից», պ. Ֆ. Խալաթեանից պսակները։ Բացի պ. Ֆ. Խալաթեանից՝ ներշնչուած պատշաճաւոր դամբանական կարգաց և ուսանող պ. Յ. Տիգրանեանը, որ արդարև կենդանի գոյներով պատկերացրեց Հանգուցեալին իբրև մարդ և իբրև Հասարակական գործիչ։

Մնացեալ խօսքը՝ պատմութեանն է, որին միշտ վկայութեան կը գայ Հանգուցեալի անձեռագործ արձանը, նորա թողած անմոռանալի և օրինակելի վաստակը՝ «Ազուլեցւոց բարբառը»։

— Մ ա ծ ո ւ։

Մոսկուա 1 ապր.

ՄԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆՈՐԱԴՈՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Մարտ ամսուան ընթացքում Թիֆլիզն ընտրութիւնների պայքարի ասպարէզ էր. մի խումբ մարդիկ շատ տաբրինից ի վեր ընտրութեան տենչով վառուած հնարներ էին որոնում դեր խաղալու մեր մի քանի ընկերութիւնների մէջ։

Այդ խմբակի գործունէութեան գլուխն մասն աւարտուած է, մնում է գժուարինը, որովհետև յիսուն վաթսուն հոգի գիւրութեամբ կարող են միանալ և կանգնել ճանապարհի գլխին ու անցք չտալ ուրիշներին, սակայն այդ դեռ դրական գործունէութիւն չէ, պէտք է ճանապարհի նպատակակէտին հասնել և վաստակ ցոյց տալ։

Խոստովանում ենք, որ նրանք այդ գործունէութիւնը ցոյց տուին արդէն Բարեգործական Ընկերութեան վերաբերմամբ, այդ ընկերութիւնը կը ծլի ու կը ծաղկի, եթէ քարտուղարը շատ ռոճիկ ստանայ, այս արդէն մի այնպիսի չաղխանակ է, որից ստացած դափնիների վրայ արժէ հանգստանալ։

Այժմ նոյնպիսի չաղխական դափնիներ պէտք է ձեռք բերել և Հրատարակչական Ընկերութիւնից։

Այդ դափնիներից մի քանիսն արդէն հիւսեց «Մուրճի» խմբագիրը. . .

Դառն է իրաւի պ. Արասխանեանցի վիճակը, այդ ապերջանիկ խմբագիրը իւր օրերն անցնում է գովաբանքներ ասելով յայտնի խմբի գեներալին, որ շնորհակալութիւն է անում նրանից հայհոյանքով. դարձեալ չէ յուսահատում քաջամարտիկ պիներորը, նա վերջին ընդհանուր ժողովում Հրատարակչական Ընկերութեան արդի վիճակը դրատարելով ասաց, որ այժմ Հասել է ընկերութեան ոսկէ դարը։

Ինչ էք կարծում, այդ շողոքորթութիւնից յետոյ նրան կրկին չը տրեցին. ոչինչ, մխիթարութիւնը դիւրին է, արժանաւոր մարդկանց վարձն է ապերախտութիւնը. մի վհատիք, պարոն Արասխանեանց, անշուշտ ձեզ կընտրեն շուտակնեայ դարում։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ընդունում է ապահովագրութիւններ ընդդէմ հրդեհի ամենայն տեսակ շէնքերի, կահ-կարասիների, ապրանքների և այլ գոյքերի։

Ապահովագրութեան պայմանները շատ մատչելի են։

Գրասենեակը գտնվում է Տիֆլիսում, Ալեքսանդրեան թատրոնի դիմաց, Ռուսական բանկի տանը։

ՎԱՃԱՌՔԻ ՏԵՂԵՐ

2 ՅՈՒԼԻՍԻ. Ս. Ներսիսեան 51 թիւով բաժնետոմսերը, որոնց վրայ 51 թիւով բաժնետոմսեր են, 9-ը թիւով տարի են եւ 23 տարուայ «Նոր Դարձ մասնաւոր վաճառականական ընկերութեան» բաժնետոմսերը:

2 ՅՈՒԼԻՍԻ. Ս. Ներսիսեան 82 թիւով բաժնետոմսեր, որոնց 51 թիւով բաժնետոմսեր են, 9-ը թիւով տարի են եւ 23 տարուայ «Նոր Դարձ մասնաւոր վաճառականական ընկերութեան» բաժնետոմսերը:

3

րուայ ընթացքում, սկսած 1888 թ. 5,632,700 պուդ։ Աչքի առաջ ունենալով հաւաքած խաղողի այս քանակութիւնը, կարելի կարծել որ Երևանայ նահանգը և շատ գինի է շինում այդ խաղողից։

Սակայն համեմատելով հաւաքած խաղողը շինած գինու հետ, դուրս է գալիս որ 1885 թ. մինչև 1889 թ. պատրաստուած է 1,126,476 վեդրօ գինի. իսկ մնացեալ խաղողը կամ գործադրուած է տնային պիտոյքների համար, կամ ծախուած է և կամ գործ է դրած օղի պատրաստելու համար. դրանից պարզ երևում է որ Երևանի գինու համար պահանջ (demande) չկայ և գինիների գները շատ էժան են, այնպէս որ մի պուդ խաղողը արժէր 37կ.—մինչև 1 ռ. 30 կ. իսկ մի վեդրօ գինին 70 կ.—1 ռ. 50 կ. Ի հարկէ այդպիսիները օգուտ չեն տեսնում գինեգործութիւնից և ամբողջ հաւաքած խաղողը կամ ծախում են կամ թողնում են տնային պիտոյքների համար։ Այդ հաղորդած տեղեկութիւններից երևում է որ գինեգործութիւնը նահանգում մի անբնական դրութեան մէջ է, և եթէ կարելի է բարձրացնել այդ կարևոր տնտեսական ճիւղը, հարկաւոր է սովորացնել ժողովրդին կանոնաւոր կերպով գինեգործելու. իսկ այդ մէջոցը պէտք է փնտռել նպատակայարմար կազմակերպած ուսումնարանի մէջ։

Թէպէտև կան Երևանում գինեգործներ, որոնք շատ թէ քիչ նպատել են գինեգործութեան, բայց դոքա հետևել են ներ, որոնք շատ թէ քիչ նպատել են գինեգործութեան, բայց դոքա հետևել են և միշտ աչքի առաջ են ունեցել առևտրական նպատակները և դոցա արած փորձերը մի նշանաւոր հետևանքներ չեն թողել տեղական բնակիչների համար։ Միայն կանոնաւոր կերպիւ բացած ուսումնարանը մեծ օգուտ կարող է բերել ժողովրդին գինեգործելու համար և պիտի ունենայ երկու նպատակ. 1) սովորացնել աշակերտներին լաւ գինի գործել և 2) հոգս տանել խաղողի որդերը (մատերը) զարգացնելու և 3) ընդունակ լինել ընտրել խաղողի ամենալաւ տեսակը, որից կարելի է շինել ամենաբարձր տեսակի գինիներ՝ խերիսի, մադերայի և պօրտվէյնի նման. և հարկէ դպրոցը գլխաւորապէս պիտի ունենայ գործնական նպատակներ և շատ ցանկալի կը լինի որ դպրոցի աշակերտները կարողանան փոքր ի շատէ ծանօթանալ տարրական կերպիւ այն բնագիտական առարկաներին, որոնք կապ ունին գինեգործութեան հետ։

Գինեգործական ուսումնարանը կարող են մտնել երիտասարդներ 15 տարեկան հասակում, որոնք աւարտել են իրանց ուսման ընթացքը գիւղական կամ քաղաքային ուսումնարաններում։ 1889 թուին Երևանի նահանգում ուսանում էին 1400 աշակերտ—որոնցից 400 հոգի աւարտել են իրենց ուսման ընթացքը. մօտաւորապէս կարելի է ենթադրել, որ սոցանից 50 հոգի կըկամենան մտնել գինեգործական ուսումնարանը։ Պատրաստական դասարանը գեներալ Զալիկովը աւելորդ է համարում, որովհետև աւարտած աշակերտները պատրաստ կը լինին գինեգործական առարկաների դասընթացներին հետևելու։

Դպրոցի ծախքը պէտք է լինի չափաւոր և հաւանական է որ պետական կալուածների նախարարութիւնը օժանդակէ այդ գործին և հաւատացած ենք, որ քաղաքային վարչութիւնը ևս իր սուղ միջոցներից չի խնայի պահել իր հաշուով մի քանի աշակերտ։ Մօտաւորութիւն կայ այդ ուսումնարանը հիմնել Սարդարի բաղում, ուր այս վերջին տարիները յայտնի գիւղատնտես Տարատիրները յայտնի գիւղատնտես Տարատիրները յայտնի գինեգործ Նովը ցանում էր բամբակի պանդան տեսակներ և այդ այգու մի մասում շինել էր փորձի համար բամբակի պլանտացիա։

1890-ի սեպտեմբերի 18-ին կայսերական գիւղատնտեսական ընկերութեան ժողովի մէջ մեր հայրենակից Խ. Վերմիշեանը, որին յանձնած էր այդ ուսումնարանի մասին մի զեկոյցումն տալ, այն միտքը յայտնեց որ հիմնուելիք գինեգործական ուսումնարանը երկու նպատակ կարող է ունենալ, այն է սովորացնել լաւ գինի պատրաստել և խաղողի մասերը զարգացնել և պահպանել. այդ երկու տեսակ մասնագիտութիւնը չէ կարելի միացնել և պ. Վերմիշեանի կարծիքով պէտք է հիմնել ոչ ուսումնարան այլ գինեգործութեան կայարան, այսինքն տարածել ժողովրդի մէջ այն տեխնիկական գիտութիւնները, որից օգտուելով այգեպէրերը կարող լինին լաւ գինի պատրաստել և սորանով մրցել Կախեթի գինու պատրաստողների հետ։ Այդ գինեգործական կայարանը պիտի ունենայ կանոնաւոր կերպիւ շինած նկուղ, մառան և այգի։ Պէտք է՝ի դէպս նկատել որ Երևանում միայն պ Կարապետ Ախլիկեանն ունի եւրոպական եղանակով՝ մի ամբողջ քաւանդ քարից կտրած ահագին նկուղ և խաղողի ամենալաւ տեսակները. և այդ պատճառաւ նորա գինիները ամենալաւն են և մեծ քանակութեամբ ծախւում են Օդեսայում. Պ. Վերմիշեանի զեկուցման միջոցին ներկայ էր պետական կալուածների նախարարութեան պաշտօնեայ պ. Արլխիպովը, որ յայտնեց ընկերութեան թէ գինեգործութեան կայսրան բանալու համար մեծ դրամական միջոցներ կըհարկաւորուին և բացի այս դժուար է գտնել պատրաստուած գինեգործ վարժապետներ և աշակերտներ, որոնք նորից պէտք է մասնագիտորէն ուսումնասիրեն քիմիա, ֆիզիկա և առհասարակ այն բնագիտական առարկաները, որոնք մտնում են գիտելիքների ծրագրի մէջ։ Ամփոփելով իւր միտքը պ. Արլխիպովը յայտնեց, որ գերազասում է ուսուանարանը առանց նախապատրաստական դասարանի՝ ինչպէս կամենում է նահանգապետ Զալիկովը կայսրանին, և որովհետև այդ տեսակ մասնագիտական ուսումնարանների ծրագրով այժմ պարապած է նախարարութիւնը, առայժմ հետաձգել այդ ուսումնարանի հարցը մինչև նոր ծրագիր հաստատելը։

Պ. Յովհաննէս Խատիսեանը ճիշտ նկատեց, որ այդ ուսումնարանն առանց նախապատրաստական դասարանի և պանսիոնի չի կարող իւր օգտաւէտ դերը կատարել, որովհետև Երևանի նահանգում աշակերտները պետական և քաղաքական ուսումնարաններում աւարտած, համարեա թէ անծանօթ են ռուսաց լեզուին և նոցա համար դժուար կըլինի մասնագիտական դասընթացքին հետևելու։ Պ. Խատիսեանն աւելացրեց որ առանց այդ ծրագրի որ պիտի ուղարկուի նախարարութիւնից, կարելի է նահանգապետ Զալիկովին գիւղատնտեսական ընկերութեան կողմից տալ մի որոշ պատասխան։

Ընկերութիւնը վճռեց ընտրել մի մասնաժողով հետևեալ մասնագէտներից. Յ. Խատիսեան, Ռ. Թաւիրեան, Վ. Գեեվկին, Ս. Զելինսկի, Ա. Փալանդար և Թ. Զիմանովկին։

Յ. Յովհաննիսեան (Երևանցի)

(Կը շարունակուի)

ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆ

Կ. Պոլսի լրագիրների մէջ կարդում ենք թէ ՎԱՆԱՅ ԼՃԻ վրայ շոգենաւ բանեցնելու համար մի ընկերութիւն կազմելու խորհուրդ կայ։ Շատ տարի առաջ այդ իսկ նպատակով մի ընկերութիւն էր կազմուած և մինչև անգամ Սուլթանը շնորհել էր արտօնութեան ֆիրմանը. բայց ինչ ինչ պատճառներով (ասօնատէրերը մեծաւ մասամբ հայեր էին) ֆիրմանը յետ առնուեցաւ։

ԱԼԱՇԿԵՐՏԻՑ գրում են արտասահմանի լրագիրներին թէ «սաստիկ տեղացած ձիւնի և և անձրևների պատճառով «Ալաշկերտի մէջ 34 տուն փլեր և 100-էն աւելի տուներ ալ փլելու վիճակին հասեր են, որոնցմէ մի քանի տնուորներ փախեր գնացեր են ուրիշ տեղեր։ Այս տարի ընդհանրապէս Հայաստանի մէջ սաստիկ եղած է ձմեռը»։

ԱՅՆԹԱՊԻ (Կիլիկիայում) մէջ, ուր բազմաթիւ այգիներ կան և խաղողը առատ, հայերը կազմել են մի գինեգործական ընկերութիւն, որ հրաւէր է կարդում Եւրոպայում ուսած գինեգործ վարպետներին գալ և այդ ընկերութեան տրամադրութեան տակ գործել Այնթապի մէջ։ Այն անձինք, որոնք կը ցանկային այդ ընկերութեան հետ բանակցել, պէտք է գիմեն հետևեալ հասցէով՝

Monsieur Joseph Boyadjian
(Turquie d'Asie) Aintab.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱ.—Ֆրանսիական հասարակապետական մամուլը գարձեալ սաստիկ դժգոհութիւն է յայտնում մի քան արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների վարմունքից, որոնք չենայելով պապի յայտնի շրջաբերականին, Վատիկանի նորագոյն կարգադրութիւններին շարունակում են ուղղակի կամ կողմնակի կերպով քարոզել հասարակութեան դէմ։ Այսպէս նորերումս Փարիզի արքեպիսկոպոսը մի ընդարձակ հովուական է ուղղել իւր վիճակի հոգևորականութեանն ու ժողովրդին և պապի շրջաբերականը մեկնելու պատրուակով աշխատում է ցոյց տալ նորա այն կարծրները, որ այսպէս թէ այնպէս կարելի է բացատրել յօգուտ այն կուսակցութեան, որ մաքառում է Ֆրանսիայի արդի կառավարութեան ձևի դէմ։

Լուր կայ որ Փարիզի և պապի միջև բանակցութիւն է սկսուած հասարակապետութեան հակառակութիւն ցոյց տուող ազդեցիկ եպիսկոպոսների այդ ուղղութեան առաջն առնելու համար։

—Նանսիում, Մարսէյլում, Ռուանում ծանր անկարգութիւններ են տեղի ունեցել եկեղեցիներում քարոզի ժամանակ։ Արմատական թերթերը մեղադրում են քահանաներին, իսկ չափաւորներն առհասարակ դատապարտելով քահանաների ձգտումը քաղաքականութեան մէջ խառնուելու պատիժ են պահանջում այն անձանց համար, որոնք խախտում են դաւանութեանց աղատութեան օրէնքը։

—Ռաւաշօլի դատը նշանակուած է ապրիլի 13-ին (25)։ Պիտի մեզատրէ ընդհանուր դատախազ Քինէ դը Բօրեպէր։

ՍՊԱՆԻԱ.—Մադրիդում անիշխանականների ահից պատգամաւորները ժողովը գրեթէ դատարկ է մնում. ոչ հասարակութիւնը և ոչ պատգամաւորները սիրտ չեն անում ժողովարան մտնել։ Ձարունակ անիշխանականները են ձերբակալուում։

Նորերումս աքսորուած են 74 հոգի օտարահպատակներ. Բարցելոնից շատ անիշխանականներ են փախել. մանաւանդ շատ մարդ է բանուած Սարագոսա, Սեվիլիա, Կադիքս և Վալենսիա քաղաքներում։

Մի քանի լրագիրներ հաղորդում են որ անիշխանականների դէմ ընդհանուր ոյժերով գործելու համար արդէն բանակցութիւններ են սկսուած մի քանի տէրութեանց միջև։

«ՈՐՁԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ)

Ապրիլի 5-ից.

ՓԸՐԻԶ.—Ջանղիլարից հեռագրում են, որ կաթոլիկ միսիոներներն Ուհանդայում յարձակման են ենթարկուել. մի քանի քահանաներ գերի են տարուած. կաթոլիկ դաւանութիւնն ընդունող շատ տեղացիներ կատաղած են։ Ֆրանսիական հիւպատոսը պահանջել է անգլիական իշխանութիւնից, որ այդ առթիւ եռանդուն միջոցներ ձեռք առնուին։

ՍՈՖԻԱ.—Բոլղարական կառավարութիւնը Ք. Դաւանը մի յայտագիր է ուղարկել, որի մէջ մի առ մի առաջ են բերուած բնչեւի և վոլկովիչի սպանման վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնները։ Յայտագրի վերջում պահանջվում է, որ Բոլղարիայում ներկայումս տիրող կարգն օրինաւոր ճանաչուի։

Ապրիլի 6-ից.

ԼՕՆԴՕՆ.—Ինչպէս լսւում է, այս տարի, յունիսին, ռուսաց մի զինուորական նաւախումբ է գնալու Պեվոն-Պօրտ՝ Պլիմութի մօտ անգլիական նաւատորմղի զօրախաղին մասնակցելու համար։ Ռուսաց նաւախմբին պատրաստում են նոյնպիսի շքով դիմաւորելու, ինչպէս դիմաւորեցին Ֆրանսիական նաւախմբին, որ անցեալ տարի Պորտսմութ էր այցելել։

Ապրիլի 7-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ապրիլի 4-ին, երեկոյեան ժամը 9-ից 44 ր. անց Ձմեռային պալատի մի քանի դահլիճներում յանկարծ հանգամ եղիքտրական լուսաւորութիւնը. բանից երևաց, որ ներքնատնը Գէորգեան դահլիճի տակ հալուել է խողովակները որ հրդեհն խափան հանգցրին հրշէջները։ Պալատի ներսում որևէ վնաս չէ եղել։

ՍԱՐԱՏՈՎ.—Վոլգան բացուեց։

Ապրիլի 8-ից

ՓԸՐԻԶ.—Թէև մինչև այժմ ստացուած տեղեկութիւնները յոյս են տալիս, որ մայիսի 1-ը կ'անցնի բանուորների կողմից առանց մի որ և է միջնադէպ չարուցելու, բայց և այնպէս ներքին գործերի նախարարը պրեֆեկտներին մի շրջաբերական է ուղարկել, որով մայիսի 1-ին արգելւում է փողոցներում ցոյցեր անել, ժողովներ դումարել և հանդէսներ սարքել։

Կ. ՊՕԼԻՍ.—Սուլթանը գայրացած է ֆիրմանի խնդրում կրած պարտութեան համար։ Սուլթանը Չիրկայի-շեբիքի տօնախմբութիւնից վերադառնալու ժամանակ կանգ առաւ նախկին խեդիւ Խամայիլ փաշայի պալատի առաջ նրա հետ առանձնապէս հաճութեամբ վարուեց և հրաւիրեց իւր մօտ ճաշի։ Այտեղի քաղաքական շրջաններն այդ միջնադէպին մեծ նշանակութիւն են տալիս։

ԲԵՐՆ.—Երէկ ստորագրուեց Իտալիայի և Զուիցերիայի միջև առևտրական դաշնագիրը։

ԲԵՐԼԻՆ.—Քանի մի օր առաջ անյաստայաւ «Մ. Ա. Ռօտշիլդ որդիք» Ֆրանկֆուրտի առևտրական տան գրքերը դանձապահ եգերը։ Բօրայում ասում էին որ եգերը մօտ 1,000,000 մարկ է գողացել։ Այդ բանն ստուգելու համար բանկային գրասենեակը կը փակուի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

(Ապրիլի 8-ին)

	Ռ.	Կ.
Լօնդօն 10 Ֆունտ ստեռլ	98	80
Բերլին 100 մարկը	48	35
Փարիզ 100 ֆրանկը	39	15
Ոսկին — —	արժէ	7 90
Մաքսային կտրօններ —	157	25
Արծաթ — — —	1	12
Բօրսային վեղէ — —	4¼ 5½	%
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի	102	75
— — — 2-րդ — —		87
— — — 3-րդ — —		—
— — — 4-րդ — —		—
— — — 5-րդ — —		—
— — — 6-րդ — —		—
6% ոսկեայ բէնտա	157	50
4% ոսկեայ փոխառութիւն	—	—
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	—	
— — — 2-րդ —	102	—
— — — 3-րդ —	103	25
Ներքին 5% առաջին փոխառ.	237	—
— — երկրորդ —	219	50
Պետական. երկաթուղային բէնտա	103	87
5½ բէնտա.	—	—
4% ներքին փոխառութեան	94	62
5% գրաւ. թղթ. Ագն. կալ. բանկի	101	62
Երք. ագն. կալ. բանկի իաղարկութեան գրաւ. թղթ.	197	25
Պետերբուրգի քաղաքային վարկի ընկերութ. պարտատոմսեր	101	25
Մոսկուայի քաղ. վարկի պարտատոմսեր — —	101	12
Օդեսայի — —	101	87
Թէոֆիլզի — — —	—	—
Դրաւ. թղթ. Թէոֆ. կալ. բանկ.	99	—
— — Ռուֆտայիսի	—	—

Բօրսային տրամադրութիւնը հաստատ է։

ԶԱՆԱԶԱՆ

Ուրմիայից (Պարսկաստանում) գրում են մի արտասահմանի լրագրի.—Այստեղ այժմ վեց տեսակ դաւանութեանց պատկանող եւրոպայի միսիոնարը կան. տեղացիք (Ասորիները) դաւանում են այն կողմ, որ կողմէն որ շատ փող են տալիս։

Այս օրերը Փարիզ քաղաքը 200 միլիօն ֆրանկի մի փոխառութիւն է արել, որից 50 միլիօնը պէտք է գործ դրուի ուսումնարանների վրայ, 25 միլիօն առողջապահական հաստատութիւնների վրայ և 70 միլիօն նորանոր փողոցներ շինելու համար։

Մանօնում (Հունգարիա) նորերումս վախճանուել է մի ոմն Եօզեֆ Դֆիւբա իր հարիւր քառասուն և հինգամեայ հասակը, դէպի հիմարիտն ու արդարը։ Եւ այսպիսի նուրբ վարպետութեամբ կատարուած և դերասանական հմուտ արուեստով ներկայացրած նորա այլակերպութիւնը նոյնքան լաւ յարմարվում է իրան, որքան և իւր արտասովոր բնաւորութեանը յատուկ յուզեալ և կատաղի կացութիւնը. . .

Սակայն յետոյ ինչ։—կարծում էք թէ՝ ի վնաս իւր անձին խաղացած այդ կատակերգութիւնից յետոյ, նա այլ և այնպէս խիստ չի զայրանում, չի ալէկոծուիլ և դարձեալ նոյն գիւահարութիւնները չի ցոյց տալ ձեզ։—Աւաղ, սխալւում էք դուք։ Չէնց այս երեկոյ նա նոյն այլայլեալ գիւահարը կը ներկայացնայ ձեզ, ինչ որ էր մի փոքր առաջ, որպէս զի վաղը կամ միւս օրը ծաղրէ, ծիծաղէ, զայրանայ, բարկանալ իւր այդպիսի այլանդակ կացութեան վրայ, ձեր գիւրահաւատ թեթևամտութեան վրայ և ըստ իւր տարօրինակ կարգին շարունակէ միշտ նոյնը կատարել՝ առանց երբ և իցէ ուղղուելու և խելքի գալու. . .

Ազատ թարգմ. ֆրանս. բնագրից՝ ՅԱՐՈՑ

կում. Դմիւբան երեք անգամ ամուսնացած է եղել և վերջին անգամ այրիանալով երբ 112 տարեկան էր, նա մտադիր էր նորից անուսնանալ, բայց նրա ազգականներն ու բարեկամները խորհուրդ չտեսան նորան այդ քայլն անելու։ Նա երբէք զաւակ չէ ունեցել։ Իւր երկար կենաց մէջտեղին Դմիւբան կերակրվում էր, բացառապէս եգիպտացորենով և գետնախնձորով։ Հազարից մի անգամ միայն մի՛ս էր գործ ածում։ Մահուանից երկու տարի առաջ նա խլացաւ և կորցրեց աչքի լոյսը։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Թիֆլիզից Բաթում փոստային գնացքը գնում է գալիս 6 ժ. 50 ր. երեկ.

Թիֆլիզից Բաթում ապրանք.-մարդատ. գն. գնում է գ. 9 ժ. 30 ր. առաւ.

Բաթումից Թիֆլիզ փոստային գնացքը հասնում է 9 ժ. 52 ր. երեկ.

Բաթումից Թիֆլիզ ապրանք.-մարդ. գն. հասնում է 12 ժ. 25 ր. ցերեկ.

Թիֆլիզից Բագու փոստային գնացքը գնում է գնում 1 ժ. 20 ր. ցերեկ.

Բագուից Թիֆլիզ փոստային գնացքը հասնում է 5 ժ. 50 ր. երեկ.

Թիֆլիզից Գանձակ խառն գնաց. գնում է գնում 9 ժ. 20 ր. երեկ.

Գանձակ Թիֆլիզ խառն գնացքը հասնում է 7 ժ. 30 ր. առաւ.

ՌՈՒՍԱՑ ՉՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Երթեւեկութիւն Բաթումի, Օդեսայի եւ Կ. Պոլսի միջեւ։

Բաղնա՜յից գոա՜ս ե գնա՜մ.

Հիգշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 4-ին, ուղիղ ընթացքով Նովոռոսիյսկի վրայով։

Կիրակի օրերը, գիշերուայ ժամը 2-ին (շաբաթ գիշերը լոյս կիրակի) շրջանառու ընթաց.քով Փոթիի վրայով բոլոր նաւահանգիստները։

Երկուշաբթի օրերը, երեկոյեան ժամը 7-ին Կ. Պոլիս։

Բաղնա՜յ հասնո՜ւմ է.

Երկուշաբթի օրերը, երեկոյեան, Օդեսայից, ուղիղ ընթաց.քով։

Ուրբաթ օրերը, առաւօտեան, Օդեսայից, ուղիղ ընթաց.քով Կերչի և Նովոռոսիյսկի վրայով։

Կիրակի օրերը, առաւօտեան, Կ. Պոլսից։

—

Փոստային եւ ապրանքակիր-մարդատար շոգենաւերի երթեւեկութիւն Փոթիի, Բաթումի եւ Օդեսայի միջեւ։

Փոթի՜ հասնո՜ւմ է.

Փոստային մարդատար շոգենաւը Բաթումից երկուշաբթի օրերը լուսաբացին։

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Օ. դեսայից կիրակի օրերը երկոյեան։

Ապրանքակիր-մարդատար շոգենաւը Բաթումից հինգշաբթի օրերը լուսաբացին։

Փոթիից գոա՜ս ե գնո՜ւմ.

Փոստային-մարդատար շոգենաւը Օդեսա և Ճանապարհին գտնուած նաւահանգիստները կիրակի օրերը, առաւօտեան ժամը 8-ին։

Փոստային-մարդատար շոգենաւը գործը վերջացնելուց յետոյ երկուշաբթի օրերը Բաթումի։

Ապրանքակիր-մարդատար շոգենաւը Բաթում երեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 10-ին։

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը հինգշաբթի օրերը, առաւօտեան ժամը 8-ին, Օդեսա և Ճանապարհին գտնուած նաւահանգիստները։

—

Ապրանքակիր -մարդատար գծ.

Բաթումից գուրս է գնում հինգշաբթի օրերը գիշերուայ ժամը 1-ին։

Բաթում հասնում է երեքշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 2-ին։

Ապրանքակիր մարդատար շոգենաւի վերայ ընդունվում են II և III կարգի ուղևորներ և առանց ուտեստի։

Գործակալութիւնը գտնվում է Թիֆլիզի Ազ. Բանկի շինութեան մէջ №№ 117 և 118։

Փոստային կառքերի երթեւեկութիւն վրաց պատերազմական ճանապարհի վրայ։

—

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւ. ժամը 8-ին. գիշերում է Մլեթի կայարանում, վլադիկաւկազ է հասնում հետևեալ օրը կէս օրից յետոյ ժամը 7½-ին։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսն ուղևորվում է կէս օրի յետոյ ժամը 3-ին առանց գիշերելու, հասնում է հետևեալ օրը կէս օրից յետոյ ժամը 7-ին։

Վլադիկաւկազից հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւ. ժամը 8-ին, գիշերում է Մլեթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը կէս օրից յետոյ ժամը 7½-ին։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսն ուղևորվում է կէս օրից յետոյ ժամը 3-ին առանց գիշերելու հասնում է հետևեալ օրը կէս օրից յետոյ ժամը 7-ին։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱՐԴԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներսիսեան Հայոց Հոգևոր Ղպրոցի հոգաբարձական խորհրդարանում ապրիլ ամսոյ 22-ին 1892 ամի, երեկոյեան 8 ժամին, լինելու ճաշուրդ (առանց կրկնաճրդի) կապալով տալու մոմավաճառութիւնը Հայոց եկեղեցեաց և ժողովրդականաց համար։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ Հոգաբարձութեան գիւանատան մէջ ամեն օր, բացի կիւրակէից և տօնէից, առաւօտեան 10-ից ց12 ժամն։

(45) 1—1

Հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ նշանակուած է ապրիլ ամսոյս 12-ին Ս. Պատարագից յետոյ ժամը 12-ին։ Կատարել քաղաքիս Մողնոյ եկեղեցւոյ նոր երեսփոխանի ընտրութիւնը, ուստի յիշեալ եկեղեցւոյ Քրիստ. Ֆիլականները հրաւիրվում են նշանակեալ օրը նոյն եկեղեցին մասնակցելու ընտրութեանը, որ կայանալու է Ս. Ֆայլիանեան օր. դպրոցի դահլիճում։

(46) 1—1

ԲԱԼԱԽԱՆԻ

Ընդունում եմ իմ խանութում ամեն տեսակ գրքեր վաճառելու։ Հասցէս՝ Балаханы (Бак. губ.) Магазинъ Николая Теръ-Акопова.

(41) (4—3)

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ
(Սակաւաթիւ)

Կարելի է ստանալ Պ. Մ. Բարխուդարեանից Հետևեալ Հասցէով. Москва. Типографія. М. Бархударянъ, Мясницкая, д. насл. Ананова.

Գինն է 60 կոպ. (ճանապարհածախքով)։

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻՄ
ընդունում է բաժանորդագրութիւն
ՍԻՄԷՕՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ընդարձակ աշխատութեան, 6—800 յեծադիր երես. գիրքը կրպարունակէ.

1. Համառօտ կենսագրութիւն Սիմէօն կաթողիկոսի.
2. Հնգամեայ (1764—8) օրագրութիւն—ընագիրը.
3. Ծանօթութիւններ.

ԱԶԼԻՍ. ԳԻԻՏ ՔԱՀ. ՂԱԼԱՆԵԱՆՑԻ

Տպագրութիւնը կը լինի շատ շքեղ։

Իւրաքանչիւր օրինակի բաժանորդագինն է . . . . . 5 ռ.

Տպագրութիւնից յետ. 8 ռ.

(Ստորագրուողը կըստանայ կենդր. գրավաճառանոցից անդորրագիրը)։

Տպագրութիւնը կըսկսուի, երբ բաժանորդների թիւը 100-ի կը հասնի։

Կենդրոնական գրավաճառանոցի Հրատարակութեամբ տպագրւում է և ապրիլի վերջն էլ պատրաստ կ'լինի Գրիգորիս Էքսէրեանցի «Թուրքահայկական խօսակցութիւններ և օրինակներ» անունով դասագիրքը, տարրական դասընթացք, մասն երկրորդ, էջերով տոլի։

(Խ) (3—3)

ՄՐՑՈՂ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

„ՎԻԵՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“
(ВѢНСКІЙ МАГАЗИНЪ)

Գօլօվինսկիյ պրօսպէկտի վրայ, առաջին գիմնազիայի հանդէպ, տուն Մդիվանիի։

ՕՏԱՑԵԼ ԵՆՔ **ՄԵԾ ԿԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ** ԳԱՐՆԱՆԱՅԻՆ և ԱՄԱՌԱՅԻՆ սեզօնի համար՝ **ՏՂԱՄԱՐԴՈՑ** և **ԵՐԵԽԱՑՈՑ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ** ամենավերջին ձևի։ Ապրանքների լաւութեան համար վաճառատունը լիովին երաշխաւորում է։

ԳՆԵՐՆ ԱԺԱՆ ԵՒ ԱՐՏՆՔԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ

Խոշոր վերջերէան էջմայշներ։

(29) (25—11)

ԹԻՖԼԻՍՈՒՄ

ԱՏԱՄՆԱԲՈՅԾ
ՀԱՄԱՉԱՍՊ ՅՈՎՍԷՓԵԱՆ
ՕՐԲԷԼԻ

Սօլօլակսկայա փողոց, սեպհական տանը №№ 14—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ { առաւօտները 8 — 10 ժամը. երեկոները 4 — 6 ժամը։

Իսկ կիւրակի և տօն օրերին առաւօտեան 8 — 2 ժամը կէսօրից յետոյ։

(2) (150—36)

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐՔԵՐԸ.

1)	ՁՄԻԹ,	«Ֆրանկլին», 2 տպ. սակաւաթիւ.	— ռ. 40 կ.
2)	»	«Վաշինգտօն», 2 տպ.	— » 60 »
3)	»	«Հոմերի Իլիականը», պատկերներով	1 » — »
4)	»	«Հոմերի Ոդիսականը» »	1 » 20 »
5)	ՍՄԻՅԼՍ,	«Բնաւորութիւն»	1 » 50 »
6)	ԱՄԻՉԻՍ,	«Սիրտ»	1 » — »
7)	»	«Պալէնինններից մինչև Ընդերը»	— » 10 »
8)		«Թուստէմ և Զոհրաբ»	— » 20 »
9)	ՁԻԼԼԷՐ,	«Աւազակներ», ողբերգութիւն	— » 50 »
10)	ՍՄԻՅԼՍ,	«Ինքնօգնութիւն»	1 » 50 »
11)	ՏՕԼՍՏՈՅ,	«Իօթինզօն», փոքրերի համար	— » 20 »
12)	»	«Կօլումբ», փոքրերի համար	— » 15 »
13)	ՀԱՅԶԻ,	«Բէաթրիչէ», վէպիկ	— » 30 »
14)	»	«Նօնցայի բերդը», վէպիկ	— » 30 »
15)	ՁՄԻԹ,	«Ինչնեկէ աղուէսը.	— » 60 »
16)	ՎԱԼԴՆԵՐ,	«Հաւատարիմ Սավիտրին» *)	— » 10 »

Ճանապարհածախսը թարգմանչի վրայ է։ Վաճառվում են Թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Маріино-Анановское училище, և Կենդրոնական գրավաճառանոցում։

*) Հրատարակութիւն «Թ. Հ. գր. հրատարակչ. ընկերութեան»։

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱԻ
Ե Ւ
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԹԻՖԼԻԶԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄԸ

	Ռ.	Կ.
ԲԱՓՓԻ՝ Վէպիկներ և պատկեր, հեղինակի լուսանկարով, գ.	2	—
ՃԱՆ. ԾԱԽ. 35 Կ.։		

ՆՈՅՆ ՏԵՂԸ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ԲԱՓՓԻ՝ Փունջ հատոր երկրորդ գ.	1	50
ՃԱՆ. ԾԱԽ. 25 Կ.։		
» Կայէնի կտակը գ.	1	20
ՃԱՆ. ԾԱԽ. 25 Կ.։		
» Խաչագողի յիշատակարանը 2 Կ. գ.	2	70
ՃԱՆ. ԾԱԽ. 35 Կ.։		
» Կայների վերջը գ.	—	50
ՃԱՆ. ԾԱԽ. 15 Կ.։		
» Սամուէլ (սակաւաթիւ) գ.	3	—
ՃԱՆ. ԾԱԽ. 50 Կ.։		
» Խենթը և Ջալալէդդին գ.	2	50
ՃԱՆ. ԾԱԽ. 35 Կ.։		
» Գաւիթ-Բէգ գ.	3	—
ՃԱՆ. ԾԱԽ. 50 Կ.։		
» Մլինն այսպէս մլուն այնպէս գ.	1	—
ՃԱՆ. ԾԱԽ. 20 Կ.։		
» Հայ կինը և Հայ երիտասարդութիւնը գ.	1	50
ՃԱՆ. ԾԱԽ. 25 Կ.։		
ՊՈՕՉԵՆՑ՝ Սօս և վարդիթեր գ.	1	50
ՃԱՆ. ԾԱԽ. 35 Կ.։		
» Բզէ գ.	1	20
ՃԱՆ. ԾԱԽ. 25 Կ.։		
» Ցեցեր գ.	1	—
ՃԱՆ. ԾԱԽ. 25 Կ.։		
» Ձահէն գ.	1	—
ՃԱՆ. ԾԱԽ. 30 Կ.։		
» Հայի խնդիր գ.	—	80
ՃԱՆ. ԾԱԽ. 30 Կ.։		
ԱՂՑՑԵՆՑ Ղ. Արութիւն և Մանուէլ 2 Կ. գ.	1	20
ՃԱՆ. ԾԱԽ. 20 Կ.։		
» Բանաստեղծութիւններ գ.	1	50
ՃԱՆ. ԾԱԽ. 25 Կ.։		
» Անահիտ գ.	—	15
ՃԱՆ. ԾԱԽ. 11 Կ.։		
ՁԻՐՎԱՆԶԱԴԻ՝ Առաջին գ.	—	75
ՃԱՆ. ԾԱԽ. 25 Կ.։		
» Ջուր յոյսեր գ.	1	—
ՃԱՆ. ԾԱԽ. 20 Կ.։		
» Գործակատարի յիշատակարանից կազմ. գ.	—	65
ՃԱՆ. ԾԱԽ. 15 Կ.։		

Օտարաքաղաքացիներին ուղարկւում է վերադիր վճարով

(43) 3—2

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ԲԱՓՓԻ
„ՎԷՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ“
ՀԱՑՈՐ ԱՌԱՋԻՆ
Հեղինակի երիտասարդութեան պատկերով

Գինն է. . . . . 2 ռ. --
Ճանապարհածախսով . . 2 ռ. 25 կ.

Յանկացողները կարող են դիմել հեղինակի այրիին՝ Тифлисъ, Сергѣевская № 20, д. Д. Лисицева, **Аннѣ Раффи.**
և ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻՆ

(Խ) (2—2)

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ
ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԱՑԻ
ց1-ն Փետրվարի 1892

ՊԱՀԱՆՋՔ	Թիֆլիզում		Բաք. և Բաթ. բաժնում.		Ընդամենը	
1. Դրամարկղ (առեւտ. թղթադրամ).	134,462	99	201,312	74	335,784	73
2. Ընթացիկ հաշիւ Պետական Հանկալի բաժնում	1,063,000	—	221,000	—	1,284,000	—
3. Զեղչումն (Disconto) մուրհակների երկու ստոր	2,515,513	19	1,175,067	99	3,690,581	18
4. Զեղչ. մուրհակների ապահոված տոկոս. թղթ.	40,000	—	—	—	40,000	—
5. Զեղչումն տոկոսաբեր թղ., կտրոնների և այլն.	24,288	39	9,366	01	33,654	40
6. Փոխառութիւն գրաւականով՝						
ա) Պետութ. ապահ. տոկոսաբեր թղթերի.	1,100,350	44	527,892	—	1,628,242	44
բ) » » » » »	225,808	—	29,605	—	255,413	—
գ) Ապրանքների	—	—	154,303	—	154,303	—
դ) Ոսկու և արծաթի	—	—	3,851	51	3,851	51
7. Հանկալի պատկանեալ տոկոսաբեր թղթեր	781,510	18	64,338	58	845,848	76
8. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր	34,390	44	475	17	34,865	61
9. Թղթակիցներ՝						
ա) Նրանց հաշիւը (Loro)	1,148,392	96	—	—	1,148,392	96
բ) Հանկալի հաշիւը (Nostro)	907,946	51	—	—	907,946	51
10. Բաժինների հաշիւը կենդրոնական վարչութեան հետ	872,139	64	—	—	872,139	64
Կենդրոնական վարչութեան հաշիւը բաժինների հետ	—	—	635,704	93	635,704	93
11. Խոզբաւած մուրհակներ	785	—	—	—	785	—
12. Պայմանաժամն անցուցած փոխառութիւն.	30,920	—	8,275	—	39,195	—
13. Ընթացիկ ծախսեր	10,358	46	3,924	39	14,282	85
14. Կահկարասիք և սկզբնական ծախսեր.	2,656	75	2,967	41	5,624	16
15. Յետ ստացուելիք ծախսեր	18,476	24	3,025	40	21,501	64
Ր. Ա.	8,910,799	19	3,041,118	13	11,951,917	32

ՊԱՐՏՔ	Թիֆլիզում		Բաք. և Բաթ. բաժնում.		Ընդամենը	
1. Կիմնական դրամագլուխ	1,000,000	—	—	—	1,000,000	—
2. Պահեստի դրամագլուխ	191,665	21	—	—	191,665	21
3. Դրամական աւանդներ՝						
ա) Պայմանաժամով	2,835,550	—	517,939	—	3,353,489	—
բ) ց'Պահանջ	327,750	—	31,085	—	358,835	—
գ) Ընթացիկ հաշուով. հասարակ	1,531,904	96	1,384,440	90	2,916,345	86
դ) » » պայմանաւոր.	—	—	122,865	41	122,865	41
4. Թղթակիցներ՝						
ա) Նրանց հաշիւը (Loro)	895,163	29	—	—	895,163	29
բ) Հանկալի հաշիւը (Nostro)	1,181,099	71	—	—	1,181,099	71
5. Բաժինների հաշիւը կենդրոնական վարչութեան հետ	—	—	836,398	67	836,398	67
Կենդրոնական վարչութեան հաշիւը բաժինների հետ	605,458	22	—	—	605,458	22
6. Հանկալի բաժնետոմսերի անվճար կտրոնների բաշխը	6,378	60	—	—	6,378	60
7. Չվճարուած տոկոսներ աւանդների, ընթացիկ հաշիւների և այլ գործողութիւնների	70,169	39	14,671	86	84,841	25
8. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ	65,337	91	39,897	63	105,235	54
9. Փոխանցիկ գումարներ	34,322	56	42,908	72	77,231	28
10. Արդիւնք 1811 թ.	165,999	34	50,910	94	216,910	28
Ր. Ա.	8,910,799	19	3,041,118	13	11,951,917	32

Дозволено цензурою, Тифлисъ, 9 Апрѣля 1892 года.

Տպարան Ց. Մարտիրոսեանցի։

Типографія И. Мартиросіанца, на Орбел. ул д. № 1—2